ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՍԱՊ-ԳՀԾՁԲ-26/06» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Սևան «03» ապրիլի 2026թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝

<u>Հանձնաժողովի նախագահ</u>
Գիտական հետազոտությունների
և կադաստրի վարման բաժնի ղեկավար Հունանյան Արայիկ

<u>Հանձնաժողովի անդամներ</u>
Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-
գլխավոր հաշվապահ Ֆերոյան Նորայր
Գլխավոր վերահսկող-կադաստրի մասնագետ Բարսեղյան Արմեն

<u>Հանձնաժողովի քարտուղար</u>
Գնումների համակարգող Խանզադյան Սիրանուշ

Հանձանաժողովի անդամներից իրավական ապահովման բաժնի ավագ իրավաբան Կարապետյան Եղիսաբեթը չի մասնակցել նիստին՝ գործուղման մեջ գտնվելու պատճառով:

1. **«ՍԱՊ-ԳՀԾՁԲ-26/06» ծածկագրով մրցույթի մասնակցի կողմից ներկայացրած հայտում առկա անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ տեղեկություններ**

1.1 Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով մասնակցի ներկայացրած հայտը և շտկման փուլում ներկայացված փաստաթղթերը՝ արձանագրեց, որ հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի գնահատման նպատակով պահանջվել է առնվազն 2 արտոնագրված փաստաբան, 1-ը՝ քրեական ուղղվածությամբ, 1-ը՝ քաղաքացիական և/կամ վարչական, որի համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով պետք է ներկայացնի կատարած գործերի համարները, սակայն «Անի Բենիկի Մկրտչյան» Ա/Ձ-ն հայտով ներկայացրել է միայն քաղաքացիական և վարչական գործերի համարներ, իսկ քրեական ուղղվածությամբ փաստաբանի առկայությունը հիմնավորող որևէ քրեական գործի համար չի ներկայացրել:

Արդյունքում հանձնաժողովի պատճառաբանված որոշման հիման վրա նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվեց և նույն օրը մասնակցին ներկայացվեց ծանուցում անհամապատասխանությունը շտկելու նպատակով:

Մասնակցի կողմից վերը նշված անհամապատասխանությունը շտկելու նպատակով 02.04.2026թ. ժամը 15:31-ին էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացվել է թվով 3 իրավաբանական խորհրդատվության ծառայության մատուցման պայմանագրեր, որոնք սկանավորված էին պատճեից («ՍԱՊ-ԳՀԾՁԲ-26/06» ծածկագրով հրավերի 8-րդ մասի 8.17 կետի 2-րդ պարբերության համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով): Պայմանագրերը կնքված են Անի Ավետիսյան Լևոնի ԱՁ-ի և ֆիզիկական անձանց միջև: Շտկման ընթացքում ներկայացված պայմանագրերը վերաբերում են իրավաբանական խորհրդատվության հնարավոր մատուցմանը և Անի Ավետիսյանի փաստացի ներգրավվածության կամ դատական ներկայացուցչության իրականացման հանգամանքը դրանցում բացակայում է, պայմանագրերում բացակայում է նաև քրեական գործերի համարները, որով կհիմնավորվեր քրեական ուղղվածությամբ փաստաբանի առկայությունը:

Մասնակցի հայտում բացակայել է նաև հավելված 1.1-ը՝ ծառայության մատուցման առավելագույն գների մասին, ինչը շտկելու համար ևս մասնակցին տրվել էր ծանուցում, սակայն

մասնակիցը էլ. փոստի միջոցով ներկայացրել է հավելված 1.1-ը, որը հաստատված չի «Անի Բենիկի Մկրտչյան» Ա/Ձ-ի կողմից: Արդյունքում հաշվի առնելով, որ մասնակիցը չի համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասնագետների որակավորմանը ներկայացվող պահանաջին.

2. Հանձնաժողովը որոշեց.

2.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի համաձայն «Անի Բենիկի Մկրտչյան» Ա/Ձ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

2.2 «ՍԱՊ-ԳՀԾՁԲ-26/06» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Քեյ ընդ Ջի լոու ֆիրմ» ՍՊԸ»-ին:

2.3 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

2.4 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0.

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____ Ա. Հունանյան

Անդամներ՝ _____ Ն. Ֆերոյան

_____ Ա. Բարսեղյան

Քարտուղար՝ _____ Ս. Խանզադյան